Հովհաննես Թումանյան

Կացին ախպեր

Մի մարդ գնաց հեռու երկիր աշխատանք անելու: Ընկավ մի գյուղ: Տեսավ այս գյուղի մարդիկ ձեռով են փայտ կոտրատում:

- Ախպե՛ր,- ասավ,- ինչո՞ւ եք ձեռով փայտ անում, մի՞թե կացին չունեք:

- Կացինն ի՞նչ բան է,- հարցրեցին գյուղացիք:

Մարդը իր կացինը գոտկից հանեց, փայտը ջարդեց, մանրեց, դարսեց մյուս կողմը: Գյուղացիք այս որ տեսան, վազեցին գյուղամեջ, ձայն տվին իրար .

- Տո՛, եկե՛ք, տեսե՛ք կացին ախպերը ինչ արավ:

Գյուղացիք հավաքվեցին կացնի տիրոջ գլխին, խնդրեցին, աղաչեցին, շատ ապրանք տվին ու կացինը ձեռքիցն առան:

Կացինն առան, որ հերթով կոտորեն իրանց փայտը:

Առաջին օրը տանուտերը տարավ: Կացինը վրա բերավ թե չէ՝ ոտը կտրեց: Գոռալով ընկավ գյուղամեջ:

- Տո՛, եկե՛ք, եկե՛ք, կացին ախպերը կատաղել է, ոտս կծեց:

Գյուղացիք եկան, հավաքվեցին, փայտերն առան, սկսեցին կացնին ծեծել: Ծեծեցին, տեսան՝ բան չդառավ, փայտերը կիտեցին վրան, կրակեցին:

Բոցը բարձրացավ, չորս կողմը բռնեց: Երբ կրակն իջավ, եկան բաց արին, տեսան՝ կացինը կարմրել է:

- Վա՜յ, տղե՛ք, կացին ախպերը բարկացել է, տեսե՛ք՝ ոնց է կարմրել, որտեղ որ է, մեր գլխին մի փորձանք կբերի: Ի՞նչ անենք: Մտածեցին, մտածեցին ու վճռեցին՝ տանեն բանտը գցեն:

Տարան գցեցին տանուտերի մարագը: Մարագը լիքը դարման էր . գցեցին թե չէ՝ կրակն առավ, բոցը երկինքը բարձրացավ:

Գյուղացիք սարսափած վազեցին տիրոջ ետևից . «Ե՛կ, աստծու սիրուն, կացին ախպորը բա՛ն հասկացրու»: